

Կրթութային շաբաթ

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртыян» (образование) еженедельник 03.04.2024թ. Հորեշաբթի թիվ 14 (1143)

Սուրբ Գրիգոր ՆԱՐԵԿԱՅԻ Տաղ յարութեան

Փա՛ռք Քրիստոսի ամենագօր յարութեան:

Սայլն այն իջաներ ի լեռնէն ի Մասեաց,
եւ ի վերայ նորա աթոռք են կարգեալ,
եւ ի վերայ նորա գահոյք ոսկեղէնք,
եւ ի վերայ նորա բեռեգք ծիրանիք,
եւ ի վերայ նորա Որդի Արքայի,
եւ յաջմէ նորա վեցթեւեան սերովբէքն,
յահելէ նորա բազմաչեայ քերովբէքն,
առաջի նորա մանկունք զեղեցիկ,
ի գիրկս նոցա խաչն տէրունական,
ի ձեռին նոցա սաղմոսարան եւ քնար,
որք երգէին եւ ասէին՝

Փա՛ռք Քրիստոսի ամենագօր յարութեան:

Ածեալ են, ածեալ զսայլիկն,
ածեալ են կացուցեալ.
եւ ահա չշարժեր սայլիկն այն՝
եւ ահա չխաղայր անիւն այն:

Եթէ հարիւր բարդ խուլըրծան, վեց կորընկան,
մին մանուշակ՝ խրձաղիգեալ.
ի Մասեաց, յաջ կողմանէն
սայլիկն ածեալ են կացուցեալ՝
եւ ահա չշարժեր սայլիկն այն,
եւ ահա չխաղայր անիւն այն:

Եթէ սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
եւ սամոտիքն ապրիշմի.

փոկեր շարած շարանման հոյլ մարգարիտ,
եւ ահա չշարժեր սայլիկն այն՝
եւ ահա չխաղայր անիւն այն:

Այն ճորտն ճոճ էր եւ ճապուկ,
ուռամիջակ, հաստաբազուկ,
լայնաթիկունք, խարտիշազեղ, ահեղագոջ՝
նա ձայն ածեր եզն ամուլին,
կանչին առներ աթոռակին:

Եթէ եզինքն են սաթ ու սպիտակ,
ծաղկախայտուցք, արագաքայլք, ընթացականք,
եղջիւրն ամէն խաչանման,
եւ մազն ամէն հոյլ մարգարիտ.

եւ ահա չարժեր սայլիկն այն,
եւ ահա խաղայր անիւն այն:

Ի յառեղէն առեալ շարժումն կուրծն սայլին՝
նա ձայն ածեր եզն ամուլին:

Սայլն ի Սինեայ երկրորդ օրէնքն էր Մովսէսի.

եւ այն հարիւր բարդ խուլըրծան՝
այն նահապետքն են, մարգարէք.

եւ այն վեց բարդ կորընկանն՝
վեցօրեայ գործքն Աստուծոյ.



եւ այն մին մանուշակ՝
միաւորեալ Երրորդութիւնն:

Եւ այն մանուկ խարտիշազեղն՝
այն Յովաննէս էր Սկրտիչն.
Եւ այն չորս կուրծըն սայլին՝
աւետարանն էր Քրիստոսին:

Ի գիլ գայր ի գիլ, սայլիկն ի գիլ,
ի Մասեաց յաջ կողմանէն՝
սայլիկն ի գիլ գայր ի գիլ

եւ ճռընչալով գայր մտաներ յերուսաղէմ,
եւ որդիք նոր Սիովնի նոր երգէին գայս ասելով՝

Փա՛ռք Քրիստոսի ամենագօր յարութեան:



Սուրբ Զատիկ

Շնորհավորանք՝ սաղմոսով

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հա-
րութեան տոնի՝ Սուրբ Զատիկի առիթով
ՀՀ վարչապետ **Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԸ**
հայ ժողովրդին շնորհավորել է **Դավթի**
հ. 25 սաղմոսով:



Ամենէ մարդու աղօթքը

1 Այսուհետեւ՝ սաղմոս **Դավթի**
Դատ արա ինձ, Տէր,
քանզի անբասիր ընթացայ, յոյսս դրի Տիրոջ վրայ,
որ չլինեն տկար:

2 Փորձիր ինձ, Տէր, եւ քննիր ինձ,
փորձիր երիկամներս ու սիրտս:

3 Ողորմութիւնդ, Տէր, աչքիս առջեւ է,
եւ ճշմարտութիւնդ հաճելի է ինձ:

4 Ունայնամիտների աթոռին ես չեմ նստի
եւ անօրէնների մօտ ես չեմ գնայ:

5 Չարագործների ամբոխը ես ատեցի
եւ անբարիշտների կողքին չեմ բազմի:

6 Սիրութեամբ կը լուամ ձեռքերն իմ
եւ սեղանիդ շուրջը կը նստեմ, Տէր.

7 Թող լսեմ քո օրհնութեան ձայնը
եւ պատմեմ քո բոլոր հրաշալիքները:

8 Տէր, սիրեցի քո տան վայելչութիւնը
եւ քո փառքի բնակութեան վայրը:

9 Մի՛ կործանիր ինձ անբարիշտների հետ
եւ ոչ էլ կեանքս՝ արիւնահեղների հետ,

10 որոնց ձեռքերն անօրհնութեան մէջ են,
եւ աջը նրանց լի է կաշառքով:

11 Ես անբասիր ընթացայ,
փրկիր ինձ, Տէր, եւ ողորմիր ինձ:

12 Ոտքն իմ ուղիղ ճանապարհների վրայ թող լինի,
մեծ հաւաքներուն քեզ պիտի օրհնեն:

Հայրապետական Սուրբ Պատարագ


Մարտի 31-ին, մեր Տեր եւ Փրկիչ **Հիսուս Քրիստոսի** Հրաշափառ
Սուրբ **Հարութեան** տոնի առիթով, **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայ-
րագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ եւ Ամնահ
Պատարագ մատուցեց **Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկե-
ղեցուն:**

Հայրապետական Սուրբ Պատարագին ներկա էին Գերագույն հո-
գեւոր խորհրդի անդամներ, Մայր Աթոռի բարերարներ, Հայաստանում
հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների եւ մի-
ջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքա-
կան-հասարակական գործիչներ եւ ուխտավոր հայորդիներ:

Մայր եկեղեցու գավթուն ամպիովանու ներքո ամփոփված Սուրբ
Գրիգոր Լուսավորչի մատուցների առջեւ երկրպագություն կատարե-
լուց հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունը բաշխելով
ներկա հավատացյալ ժողովրդին, եկեղեցականաց թափորով առաջ-
նորդվեց դեպի Սուրբ Խորան: Վեհափառ Հայրապետին որպէս առըն-
թերականեր սպասավորում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արտաքին
հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրէն Գերաշնորհ
Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Արցախի թեմի
առաջնորդ Գերաշնորհ **Տեր Վրթանէս Եպիսկոպոս Աբրահամյանը:**

Սուրբ Պատարագի ընթացքում Հայոց Հայրապետը համայն հայու-
թյանը հղեց հայրապետական իր պատգամը (**տե՛ս՝ էջ 5**)՝ փոխանցելով
«Քրիստոս յարեալ ի մեռելոց» իրեշտակաբարբառ ավետիսը:

Նախագահ Վահագն ԽԱՉԱՏՈՒՅԱՆԻ շնորհավորանքը՝ Սուրբ Չատիկի առթիվ



Սիրելի՛ հայրենակիցներ,
Շնորհավորում եմ բոլորին՝ Հիսուս
Քրիստոսի հրաշափառ Հարության
տոնի կապակցությամբ:

Սուրբ Չատիկը մեր ժողովրդի
ամենասիրելի ու ընտանեկան տոնե-
րից մեկն է, որը խորհրդանշում է բա-
րու եւ ճշմարտության, միաբանու-
թյուն ու վերածննդի հաղթանակը:

Այս նվիրական տոնի առթիվ՝ սր-
տանց մաղթում եմ մեր երկրին ու հայ-
րենակիցներին բարօրություն ու բար-

զավաճում, անսպառ հավատ ու հոգեւոր արիություն:

Թող հարության լույսը ճառագի բոլորին ընտանիքներում եւ աշխար-
հասփյուռ հայությանը զորություն ու կամք պարգևի դժվարությունները
հաղթահարելու, համերաշխության, միմյանց ու մեր պետության հանդեպ
հոգ տանելու համար:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Օրինյալ է հարությունը Քրիստոսի:

ՀՀ ԱԺ Նախագահ Ալեն ՍԻՄՈՆՅԱՆԻ շնորհավորանքը՝ Հարության տոնի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,
Ջերմորեն շնորհավորում եմ Սուրբ
Չատիկի՝ Հիսուս Քրիստոսի Հարության
տոնի առթիվ:

Թող այս լուսավոր տոնն օրհնու-
թյուն, խաղաղություն եւ բարօրություն
բերի բոլորին ընտանիքներին եւ հայ
ժողովրդին:

Քրիստոս հարյավ ի մեռելոց:
Օրինյալ է Հարությունը Քրիստոսի:



Կառավարության որոշումով

Քուլեջները վերակազմակերպվել են

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ԿԳՄՍՆ Դիլիջանի պետական եւ Դիլիջա-
նի պետական բժշկական քուլեջները միաձուլման ձեւով վերակազմակերպվել
են Դիլիջանի բազմագործառնության պետական քուլեջի: Որոշման նախագի-
ծը նշակվել է՝ ելնելով Դիլիջան քաղաքում սովորողների թվաքանակի նվա-
զեցման միտումից եւ ուսումնական հաստատություններին ամրացված տա-
րածքների օպտիմալ օգտագործման պահանջից:

Ըստ հիմնավորման՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում գործում են ՀՀ
կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության Դիլիջանի
արվեստի պետական, Դիլիջանի պետական եւ Դիլիջանի պետական բժշկա-
կան քուլեջները:

Դիլիջանի պետական քուլեջում ներկայում սովորում է շուրջ 194 ուսանող,
որոնց 79-ը՝ նախնական մասնագիտական կրթական ծրագրով, իսկ Դիլիջանի
պետական բժշկական քուլեջում՝ 196 ուսանող: Վերոնշյալ հաստատություննե-
րին ամրացված տարածքների մի մասը չի օգտագործվում ուսումնական գոր-
ծընթացի կազմակերպման համար, եւ լրացուցիչ ֆինանսական միջոցներ են
տրամադրվում պահպանման նպատակով: Դիլիջանի պետական բժշկական
քուլեջին ամրացված ուսումնական մասնաշենքում անհրաժեշտ է իրականաց-
նել հիմնանորոգման աշխատանքներ, ինչի ավարտից հետո Դիլիջանի բազ-
մագործառնության պետական քուլեջն ուսումնական գործընթացը կիրակա-
նացնի գործող նորմատիվների պահանջներին համապատասխան պայման-
ներում:

Դիլիջանի պետական եւ Դիլիջանի պետական բժշկական քուլեջների օպ-
տիմալացման (խոշորացման) արդյունքում՝ Դիլիջանի բազմագործառնությա-
յին պետական քուլեջում կբարձրանա ուսումնական հաստատության կառա-
վարման արդյունավետությունը, կբարելավվեն շենքային պայմանները եւ
հնարավորություն ընձեռնելով պահպանել ուսուցանվող մասնագիտություն-
ները՝ կներդրվեն մարզի աշխատաշուկայի պահանջները ելնելով նոր մասնա-
գիտություններ, ինչպես նաեւ հնարավորություն կստեղծվի մեկ հաստատու-
թյան ներսում իրականացնել նախնական (արհեստագործական) եւ միջին
մասնագիտական կրթական ծրագրեր: Այսպիսով՝ որոշման արդյունքում
բարձրորակ կրթության ապահովման համար կստեղծվեն համապատասխան
պայմաններ եւ ուսումնական հաստատությունները կհամալրվեն մանկավար-
ժական ներուժով:

Հ. ՀՈՎԿԱՆՆԻՍՅԱՆ

Կրթության որակի բարձրացման համատեքստում



Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդու-
նել է Հայաստանի ամերիկյան համալսարա-
նի նախագահ Բրյուս Պողոսյանին:

ՀՀ վարչապետը շնորհավորել է Բրյուս
Պողոսյանին՝ համալսարանի նախագահի
պաշտոնը ստանձնելու առիթով եւ մաղթել
հաջողություններ:

Նիկոլ Փաշինյանը կարեւորել է Ամերիկ-
յան համալսարանի դերը Հայաստանի
բարձրագույն կրթության ոլորտում:

Բրյուս Պողոսյանն անդրադարձել է Ամե-
րիկյան համալսարանում նախատեսվող
ծրագրերին եւ առաջիկա նախաձեռնու-
թյուններին:

Մտքեր են փոխանակվել նաեւ բարձրա-
գույն կրթության ոլորտում ՀՀ կառավարու-
թյան բարեփոխումների շուրջ: Կրթության
որակի բարձրացման համատեքստում զրու-
ցակիցները կարեւորել են դրանց հետեւո-
ղական իրականացումը:

Մանկանց

Նվիրված էր Աուտիզմի իրազեկման միջազգային օրվան

«Աուտիզմ» ազգային հիմնադրամն Աուի-
տիզմի իրազեկման միջազգային օրվա շր-
ջանակում կազմակերպել է միջոցառում,
որին ներկա են եղել ՀՀ ԿԳՄՍ նախարար
Ժաննա Անդրեասյանը, ՀՀ վարչապետի
տիկին Աննա Հակոբյանը, ԿԳՄՍ նախարարի
տեղակալ Արաքսիա Սվաջյանը եւ այլք:

Միջոցառումը կազմակերպվել է «Աու-
տիզմ» ազգային հիմնադրամի՝ Երեւանում
գործող «Իմ ուղին» սոցիալ-հաբիլիտացի-
ոն, կրթական եւ մասնագիտական ուսուց-
ման ցերեկային կենտրոնում, որը ներկայում
ապահովում է 200 շահառուի վերականգնո-
ղական, կրթական, սոցիալականացման եւ
մասնագիտական վերապատրաստման ծա-
ռայություններ:

Հաստատության սաները հանդես են
եկել համերգային կատարումներով: Կազ-
մակերպվել է նաեւ երեխաների ձեռագործ
աշխատանքների ցուցահանդես-վաճառք,
որից ստացված հասույթը տրամադրվելու է

ԼԳ-ից բռնի տեղահանված, աուտիզմ ունե-
ցող երկու եղբայրների՝ ապահովելով նրանց
ճանապարհածախսը «Իմ ուղին» հաճախե-
լու եւ վերականգնողական շարունակական
թերապիաները ստանալու համար:

Միջոցառման ընթացքում ընդգծվել է հա-
մընդհանուր ներառականության ապահով-
ման կարեւորությունը՝ որպես պետության
գերակա ուղղություններից մեկը, որն արդեն
իսկ իրականացվում է կրթական գրեթե բո-
լոր մակարդակներում: Նշվել է՝ համընդհա-
նուր ներառականության ապահովումը հնա-
րավորություն է տալիս ցանկացած երեխա-
յի, անկախ իր զարգացման առանձնահատ-
կություններից, հասակակիցների հետ կր-
թություն ստանալու եւ իր պոտենցիալը
իրացնելու:

Այս համատեքստում կարեւորվել է նաեւ
պետության հանձնառությունը՝ նպաստելու
աուտիզմ ունեցող անձանց ծայրը լսելի
դարձնելուն:





ԿԳՄՍ Նախարարության 2023 թ. կատարողականը

Կրթության ոլորտում իրականացվել է քառասունհինգ ռազմավարական ծրագիր

Աժ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստում քննարկվել է 33 կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցը:

Նիստը վարել է Աժ ԳԿՄՍԵՍ հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը: Քննարկմանը մասնակցել են 33 ԿԳՄՍ նախարար ժամնա Անդրեասյանը, նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը, Արաքսիա Սվաջյանը, Կարեն Գիլոյանը, Ալֆրեդ Քոչարյանը, Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջյանը, Լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանը, Աժ եւ ԿԳՄՍՆ այլ ներկայացուցիչներ:

ԿԳՄՍ նախարարության 2023 թվականի ծրագրերը ներկայացրել է նախարար ժամնա Անդրեասյանը՝ նշելով, որ այն եղել է 33 կրթության միջնաճակատի 2030 թվականի զարգացման պետական ծրագրի իրականացման տարի. դրա շրջանակում իրագործվել են ավելի քան քառասունհինգ ռազմավարական ծրագրեր:

2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում ներդրվել է հանրակրթության պետական նոր չափորոշիչը

Հանրակրթության ոլորտում նախարարն առանձնացրել է սեպտեմբերից բոլոր դպրոցների 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում հանրակրթության պետական նոր չափորոշիչի ներդրումը, որի շրջանակում իրականացվել են բազմաթիվ բարեփոխումներ: Ըստ այդմ պարտադիր են դարձել նախազգային ուսուցումը, խմբակներն ու հետազոտական աշխատանքը:

«Այս ուղղությամբ արդեն բազմաթիվ դրական արձագանքներ ունենք դպրոցներից. համապատասխան մեթոդաբանությունները ներդրելու շնորհիվ՝ աշակերտների շրջանում մեծացել է հետաքրքրությունը սովորելու նկատմամբ, եւ ակնհայտ է, որ Տավուշում գրանցված արդյունքներն արդեն հասանելի են դառնում հանրապետության բոլոր դպրոցներում»,- նշել է նախարարը:

Ներդրվել է պարտադիր երկարօրյա ուսուցում՝ ցածր առաջադիմությամբ երեխաների համար

Տարրական դասարաններում միավորային զննհատում այլեւս չի իրականացվում, համվել է անբավարար զննհատականային շեմը, ներդրվել է պարտադիր երկարօրյա ուսուցում ցածր առաջադիմությամբ երեխաների համար: Այս ուղղությամբ եւս, ըստ ժամնա Անդրեասյանի, դպրոցներից ստացվել են բավականին դրական արձագանքներ առ այն, որ աշխատանքը դառնում է ավելի արդյունավետ եւ թիրախային այն երեխաների համար, որոնք հավելյալ աջակցության կարիք ունեն:

Դասագրքերի արժեքը նվազել է

Նախարարը կարեւորել է այն փաստը, որ նախորդ տարի էական բարեփոխումներ են իրականացվել դասագրքերի ոլորտում. նոր ձեւաչափով են իրականացվել դասագրքերի ստեղծման եւ տպագրության մրցույթները, որի շնորհիվ ապահովվել է մրցակցային բաց դաշտ, եւ դասագրքի արժեքի էական նվազեցում է արձանագրվել՝ միջինում մինչեւ 26%-ով:

«Ընդ որում՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող դասագրքերի պարագայում այս փոփոխությունը զգալի է, եւ մենք կարողացել ենք այս իմաստով ավելի արդյունավետ գործընթաց ստանալ: Դասագրքերի որակի առումով եւս աշխատանքները ավստահաբար կարող ենք համարել հաջողակ»,- նշել է նախարարը:

տով ավելի արդյունավետ գործընթաց ստանալ: Դասագրքերի որակի առումով եւս աշխատանքները շարունակվում են. վստահ եմ, որ այս տարվա մրցույթների արդյունքում ունենալու ենք շատ ավելի որակյալ բովանդակություն, քանի որ փոխվել է նաեւ փորձաքննության ողջ համակարգը»,- նշել է ժամնա Անդրեասյանը՝ որպէս հաջորդ կարեւոր գործընթաց մատնանշելով հաստատությունների երեքակառուցվածքների բարելավումը՝ 33 կառավարության «300 դպրոցների կառուցման, վերակառուցման եւ հիմնադրոգման ծրագրի» շրջանակում:

Նոր լաբորատորիաներ՝ դպրոցների համար

Ժամնա Անդրեասյանը նշել է, որ նախորդ տարի ՏՅՏ եւ բնագիտական լաբորատորիաներ են ստեղծվել Արմավիրի մարզի բոլոր եւ այլ մարզերի ու Երեւանի նորակառույց դպրոցներում. «Այս տարի միանգամից 6 մարզի դպրոցներ կստանան ֆինանսավորումից անցում է կատարվել կենսաբանության եւ ՏՅՏ լաբորատորիաներ, որոնք աջակցություն են այս առարկաների ուսուցման՝ ավելի փորձարարական բնույթի եւ էական մեծացում են դրա արդյունավետությունը»:

Ֆինանսավորումը կատարվում է՝ ըստ դասարանների թվի

Նախարարը տեղեկացրել է, որ սեպտեմբերից ներդրվել է դպրոցների ֆինանսավորման նոր կարգը. սովորողի թվով ֆինանսավորումից անցում է կատարվել դասարանների թվով ֆինանսավորմանը, էական ավելացել է կրթության ներառականության ֆինանսավորումը, առանձին ֆինանսավորում է նախատեսվել լաբորատորիաների պահպանման համար, նորմատիվային դաշտ են բերվել առանձին ուղղություններով ֆինանսավորման ծախսերը, որը եւս արդեն տալիս է իր առաջին արդյունքները:

Տնօրենի նշանակման նոր համակարգ. հավակնորդների զարգացման ծրագրերի մոտ 85 տոկոսը չի ստանում դրական եզրակացություն

«Կառավարման համակարգի բարեփոխումը սկսել է աշխատել. իհարկե, դեռ ժամանակ կա, որպեսզի այն գործի բոլոր դպրոցներում, եւ իրենց բարելավվեն ընթացակարգերը, սակայն բովանդակային եւ վարչատնտեսական կառավարման տարանջատման արդյունքում



ներդրվել է տնօրենների նշանակման ամբողջական նոր համակարգ: Այս եռափուլ համակարգը՝ հավաստագրում, զարգացման ծրագրի փորձաքննություն եւ հարցազրույց, դեռեւս աջակցության կարիք ունի: Իրականում զարգացման ծրագրերի մոտ 85 տոկոսը չի ստանում դրական եզրակացություն, իսկ հարցազրույցի փուլ հասած 15 տոկոս հավանորդներից 63 տոկոսը չի հարթահարում հարցազրույցի փուլը: Այս պահին սա համակարգի ախտորոշումն է, սակայն մենք նպատակ ունենք ներդրել դասընթացների առանձին ծրագիր, որպեսզի տնօրենների հավակնորդներն ավելի լավ պատկերացնեն կրթության կառավարման համակարգը»,- նշել է նախարարը:

Կամավոր ատեստավորում. շուրջ 4000 ուսուցիչ վարձատրությունն առնվազն կրկնապատկվել է

Անդրադառնալով ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ վարձատրության բարձրացման աշխատանքներին՝ ժամնա Անդրեասյանը շեշտել է, որ այս տարի առաջին անգամ գործարկվելու է ուսուցիչների կարիքի գնահատման վրա հիմնված համակարգը. յուրաքանչյուր ուսուցիչ կարողանալու է ստանալ իրեն անհրաժեշտ վերապատրաստումը: Շարունակվել է կամավոր ատեստավորման գործընթացը. 2023 թվականին ատեստավորմանը մասնակցել է ավելի քան 4000 ուսուցիչ, դրական արդյունք է գրանցել շուրջ 3000-ը: Երեք տարիների ատեստավորման արդյունքում շուրջ 4000 ուսուցիչ վարձատրությունն առնվազն կրկնապատկվել է: Վերանայվել է ուսուցիչների տարակարգի համակարգը. տարակարգի մեխանիզմը կապակցվել է ուսուցչի դասավանդման հմտություններին:

Արդեն 400 հազար դրամ եւ ավելի աշխատավարձ է ստանում ավելի քան 220 ուսուցիչ

Նոր մեխանիզմով տարակարգ է ստացել ավելի քան 100 մանկավարժ, այդ թվում՝ առաջին անգամ ամենաբարձր (չորրորդ աստիճանի տարակարգ) 50 % հավելավճարով: Տարակարգի եւ կամավոր ատեստավորման համակարգերի միջոցով առկա են 400.000-ից մինչեւ 600.000 ՀՀ դրամ վարձատրություն ստացող ուսուցիչներ. 400.000 ՀՀ դրամ եւ ավելի աշխատավարձ է արդեն ստանում ավելի քան 220 ուսուցիչ:

Հավելավճարի նոր ծրագրեր

Սեպտեմբերից մեկնարկել են հավելավճարի տրամադրման նոր ծրագրեր. 25 %-ով բարձրացել է բնագիտական առարկաների եւ ինֆորմատիկայի ուսուցիչների աշխատավարձը՝ շուրջ 32.000 դրամ աճով: Ըստ նախարարի՝ այստեղ աճը կարող է տարբեր լինել. եթե ուսուցիչն անցել է կամավոր ատեստավորում, նրա դրույքաչափը հաշվարկվում է 200 հազար դրամի հիման վրա, եւ 25 տոկոսը համապատասխանաբար է դիտարկվում: Սեպտեմբերից բարձրացել է նաեւ մինչեւ 100 սովորող ունեցող գյուղական դպրոցների շուրջ 3000 ուսուցիչների վարձատրությունը, որոնց դրույքաչափը ավելացել է միջինում 71.700 ՀՀ դրամից հասնելով 115.300 ՀՀ դրամի: Այս թվերը եւս կամավոր ատեստավորման արդյունքում փոխվում են:

Արտադպրոցական հաստատությունների մանկավարժների կամավոր ատեստավորում

Արվեստի եւ սպորտի ոլորտներում արտադպրոցական հաստատությունների մանկավարժների համար ներդրվել է կամավոր ատեստավորման մեխանիզմ 60.000, 80.000 եւ 100.000 ՀՀ դրամ հավելավճարի չափերով: «Հաշվի առնելով, որ համակարգը ներդրվել է առաջին անգամ, եւ ատեստավորման ուղղությունները եղել են սահմանափակ ատեստավորվել եւ այս պահին հավելավճար է ստանում 42 մանկավարժ: Այս օրերին իրականացվում է ատեստավորման նոր փուլի հայտագրման գործընթացը, եւ ես հույս ունեմ, որ ավելի մեծ թվով մանկավարժներ ակտիվորեն կմասնակցեն դրան, քանի որ ավելացել են ատեստավորման ուղղությունները»,- փաստել է նախարարը:

Կրեդիտային համակարգի փորձարկում՝ ավագ դասարաններում

Ավագ դասարաններում փորձնական կարգով ներդրվել է կրեդիտային համակարգը, որի շրջանակում դպրոցների կրեդիտները ճանաչվում են բուհերի կողմից: Այս շրջանակում մասնավորի հետ համագործակցությամբ 16 դպրոցում ներդրվել է Արհեստական բանականության դասընթացը: Այլեւս ամբողջությամբ պետական ֆինանսավորմամբ է իրականացվում 33 մարզերի 1-4-րդ դասարանների 100 000-ից ավելի երեխաների առողջ սննդի ծրագիրը, որոնք ուղիղ ազդեցություն են ունենում կրթության որակի վրա: «Հայաստանը միացել է Դպրոցական սննդի համաշխարհային կոալիցիային, եւ 33 փորձը համարվում է ամենահաջողվածներից մեկն աշխարհում, ընդ որում՝ պետության կողմից դրա շարունակականությունն ապահովելու տեսանկյունից: Տարբեր հարթակներում մենք ներկայացրել ենք ծրագրի իրականացման հաջողված փորձը եւ առաջարկել մեր գործընկերներին՝ Դպրոցական սննդի համաշխարհային կոալիցիայի առաջիկա համաժողովներից մեկը կազմակերպել Երեւանում»,- ընդգծել է նախարարը:

Կրթության ոլորտում իրականացվել է քառասունհինգ ռազմավարական ծրագիր

սկզբը՝ էջ 3

Նախադպրոցական ծառայությունների լիցենզավորում. գրանցվել է 19 հաստատություն

2023 թվականին նախադպրոցական կրթության ոլորտում իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնց շնորհիվ պարզեցվել է վարչարարությունը տնօրենների հավաստագրման և կառավարման գործընթացներում, բարելավվել են ներառականության ապահովման հնարավորությունները: «Հաստատվել են նախադպրոցական ծառայությունների լիցենզավորման պայմանները, որի արդյունքում 2024 թվականի այս մի քանի ամսվա ընթացքում արդեն ունենք մի իրավիճակ, որ շուրջ 2000 երեխաներ և 19 հաստատություններ, այսպես կոչված, ստվերից եկել են գրանցման դաշտ, որը կարելի է որակի վերահսկողության և երեխաների ընդգրկվածության իրական ցուցանիշներ ունենալու տեսանկյունից: 29 բնակավայրերում ստեղծվել են նախակրթարաններ: Այս հարցում կարելի էր այն փաստը, որ կրթության զարգացման պետական ծրագրում որպես թիրախ ամրագրել ենք՝ առնվազն մինչև 2030 թվականը մեր բոլոր երեխաների համար գրանցել մեկ տարի նախադպրոցական կրթությունը պետք է լինի պարտադիր, որը կգնի որանց ավելի լավ նախապատրաստվել դպրոցին», - շեշտել է նախարարը:

Շարունակվել է նախադպրոցական հաստատություններում համընդհանուր ներառական կրթության ներդրման գործընթացը: «Հիշեցնեմ, որ մենք բյուջեից ֆինանսավորում էինք հատկապես կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին. նախորդ տարվա համեմատ երեխաների թիվն աճել է ավելի քան 5 անգամ: Սա նշանակում է, որ հարցի զգալի մասը և աշխատանքը տեղեցրում արդյունք են տալիս: Բացի դրանից՝ պետական բյուջեից ֆինանսավորվում է նաև զինծառայողների երեխաների՝ այս ոլորտի կրթությունը, իսկ այս սեպտեմբերից այն կստանան նաև անապահով ընտանիքների երեխաները», - ընդգծել է ժամանակակից կրթության նախարարը:

Տարակարգ կարող են ստանալ նաև մանկապարտեզների մանկավարժները

Շարունակվել են նախադպրոցական մանկավարժների մասնագիտական զարգացման ծրագրերը. վերապատրաստվել է շուրջ 1.500 մասնագետ: Ներդրվել է մանկապարտեզների մանկավարժական աշխատողների մասնագիտական զարգացման և վարձատրության բարձրացման փոխկապակցված համակարգը՝ տարակարգի տեսքով, որի արդյունքում արդեն կան տարակարգ ունեցող մանկավարժներ, որոնք ստանում են 30 %-ից 50 % հավելավճար:

Շարունակվել է «500 մանկապարտեզի կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման ծրագիրը»: 145 հաստատությունում շինարարական աշխատանքներն ավարտվել են, 90-ում՝ ընթացքում են: Նախադպրոցական ծառայություններ կգործեն նաև բոլոր կրթահամալիրներում:

«Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրինագիծը

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության ոլորտում նախարարն ընդգծել է «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքի կարեւորությունը, որն Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է: Դուրս ուսուցման մոդելով իրականացվող մասնագիտությունների մասնաբաժինը հասել է 15 %-ի, իսկ ուսումնական հաստատություններին՝ 18.3 %-ի:

50 հազար դրամ կրթաթոշակ՝ քոլեջների և ուսումնարանների գերակա մասնագիտությունների համար

Վերանայվել է ոլորտում կրթաթոշակային քաղաքականությունը. տնտեսության համար գերակա ճյուղերի մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության բարձրացման նպատակով գյուղատնտեսություն, արդյունաբերություն և շինարարություն ուղղություններով կրթությունը ստացող ուսանողների համար սահմանվել է 50.000 դրամ կրթաթոշակ արդեն իսկ բերելով ընդունելության աճի: 13 քոլեջում ընթանում են շենքային պայմանների բարելավման աշխատանքներ, իսկ 7 քոլեջներ համալրվել են նոր գույքով: «ՄԿՈՒ ոլորտում իրականացվել են օպտիմալացման աշխատանքներ. 5 հաստատություններ միավորվել են: Այս քաղաքականությունը շարունակվելու է, քանի որ այն ՀՀ կառավարության ծրագրի և Կրթության ռազմավարության կարևոր ուղղություններից է: Շարունակվել է մասնավոր հատվածի հետ արդյունատես համագործակցությունը, որն առաջիկայում միմիայն ընդլայնվելու է», - շեշտել է նախարարը:

Մշակվում է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը

Բարձրագույն կրթության ոլորտում ժամանակակից անդրադարձել է ակադեմիական քաղաքին՝ նշելով, որ նախորդ տարին ծրագրի համար եղել առանցքային թե՛ կառուցվածքի, թե՛ ծրագրային բովանդակության առումով: Ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամը, մշակվել և հաստատվել է ծրագրի հայեցակարգը, մեկնարկվել են գլխավոր հատակագծի մշակման աշխատանքները՝ գերմանական ճարտարապետական ընկերության կողմից: «Չուզանք բուհերին և գիտահետազոտական կազմակերպություններին խնդրել էինք մինչև այս տարվա փետրվարի 15-ը հայեցակարգային առաջարկներ ներկայացնել միավորման և խոշորացման գործընթացի վերաբերյալ: Հուլիսից էլ կնքվել Լոնդոնի արվեստների համալսարանի և Սյունիսի տեխնիկական համալսարանի հետ՝ արվեստների և տեխնոլոգիական կլաստերների շուրջ համագործակցության վերաբերյալ: Մեկնարկի առաջին իսկ օրվանից ծրագիրն ունի մեկ կարևոր սկզբունք՝ այն խիստ մասնակցային է, և ոչինչ տեղի չի ունենում փակ դռների հետևում: Ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնցում ներառված են այդ ուղղությունների շահառու հաստատությունները, որը քննարկումների

այն հարթակն է, որտեղ բուհական և գիտական հանրության ներկայացուցիչները կարող են ներկայացնել փաստարկներ և մասնագիտական հիմնավորումներ: Աշխատանքների յուրաքանչյուր փուլում մենք դրանց արդյունքները ներկայացնելու ենք հանրությանը և իրավիճակը ենք դառնալու այդ երկար, հետևողական և բազմաշերտ աշխատանքի մասնակից», - փաստել է նախարարը:

Ընդունելության քննություններ՝ երկու փուլով

Ժամանակակից կրթության ոլորտում իրականացված մյուս գործընթացները. առաջին անգամ ընդունելության քննություններն անցկացվել են երկու փուլով՝ նվազեցնելով քննական սթրեսը և լարվածությունը, ինչպես նաև հնարավորություն ընձեռելով դիմորդներին լավագույնս դրսևորել իրենց կարողությունները: 2023-2024 ուստարում գրանցվել է ՀՀ բուհերում սովորող օտարերկրյա ուսանողների թվի շուրջ 8,4 % աճ: Մշակվել է ՀՀ բուհեր օտարերկրյա քաղաքացիների փաստաթղթերի ընդունելության և հաշվառման էլեկտրոնային հարթակը, որի շահագործումը նախատեսվում է 2024-2025 ուստարում:

ԲՏԾՄ մանկավարժական ծրագրերով սովորողներին տրվում է բաժր կրթաթոշակ

Գործարկվել է բուհերում կրթաթոշակի նոր մոտեցումը. պետության համար առաջնային և կարեւորություն ներկայացնող մասնագիտությունների համար սահմանվել է 70.000-77.000 դրամ կրթաթոշակ՝ նախկինում գործող 5.000-6.500 դրամի փոխարեն: Կրթաթոշակի նոր մոտեցումը ներդրվել է ԲՏԾՄ մանկավարժական ծրագրերով սովորողների համար. նախատեսվում է ընդլայնել կրթական ծրագրերի թիվը: ԲՏԾՄ մասնագիտությունների գծով լրացուցիչ 100 տեղով ավելացվել է բակալավրի կրթական ծրագրով ընդունելության համար նախատեսվող պետության կողմից ֆինանսավորվող տեղերի թիվը՝ կազմելով պետական ֆինանսավորմամբ տեղերի ավելի քան 55 %-ը: Նախորդ տարի առաջին անգամ ներդրվել է ԲՏԾՄ ուղղությամբ ՀՀ բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետման համակարգը, որի շրջանակում տարկետում է ստացել 105 ուսանող: Այդ ուղղություններով պետական պատվերով ընդունելությունն աճել է 17,3 %-ով այն պարագայում, երբ նախկինում տեղերը չէին համալրվում:

Բարձրացվել է գիտաշխատողների աշխատավարձը

2023 թվականին գիտության ոլորտում իրականացվել են մի շարք կարևոր աշխատանքներ. մասնավորապես՝ մշակվել և ներդրվել է գիտաշխատողների ատեստավորման նոր կարգը, որով սահմանվել են որակական և քանակական նոր պահանջներ՝ համադրելի միջազգային չափորոշիչների հետ:

Նախարարը նշել է, որ գիտության ոլորտի (ներառյալ ռազմարդյունաբերությունը) պետության ֆինանսավորումը կազմել է շուրջ 36 մլրդ ՀՀ դրամ, որը 2022 թվականի ֆինանսավորման չափից 6,2 մլրդ ՀՀ դրամով կամ 20,8 %-ով ավելի է: 2018 թվականի 14,3 մլրդ ՀՀ դրամի

համեմատ 2024 թվականին ոլորտի ֆինանսավորումն ավելացել է 25,9 մլրդ ՀՀ դրամով՝ շուրջ 2,8 անգամ: Շարունակվել է գիտաշխատողների աշխատավարձերի բարձրացման գործընթացը. արդեն իսկ գրանցվել է աշխատավարձի ավելացում 75 %-ից մինչև 226 %: Իրականացվել է երկակի նշանակության ծրագրերի աջակցության ամենամյա մրցույթը. ֆինանսավորում տրամադրվել է 15 կարևոր պաշտպանական ծրագրերի: Հետազոտական ենթակառուցվածքները ժամանակակից գիտական սարքավորումներով համալրելու նպատակով առաջին անգամ պետական բյուջեից միջոցներ են հատկացվել կապիտալ բնույթի ծախսային ծրագրերով՝ շուրջ 4,2 մլրդ ՀՀ դրամի չափով: Հարկ է նշել, որ 2013-2017 թվականների ընթացքում նույն նպատակով տրամադրվել է ընդամենը 961,4 մլն ՀՀ դրամ:

Արտերկրի գիտնականների հետ կապերի սերտացում

Իրականացվել է մրցունակ գիտական ստորաբաժանումների հազեցվածության ուղղված մրցութային ծրագիր, որի բյուջեն ամբողջությամբ ուղղվել է փոքր և ամենօրյա կիրառություն ունեցող գիտական սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը: Մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 60 հայտ: Եապես ավելացել է ոլորտում մրցութային հիմունքներով տրամադրվող ֆինանսավորման մասնաբաժինը՝ 2018 թվականին գիտական գործունեության մրցութային ծրագրերով ֆինանսավորման մասնաբաժինը կազմում էր 30 %, իսկ 2023-2024 թվականներին այդ ցուցանիշը կազմել է շուրջ 60 %: Արտերկրի գիտնականների հետ կապերի սերտացման շրջանակում ֆինանսավորման է երաշխավորվել ԲՏԾՄ ոլորտի 6 նախագիծ, իսկ հետավոր լաբորատորիաների ստեղծման ծրագրի շրջանակում ԲՏԾՄ ուղղությամբ 11 և հասարակագիտական՝ 4 նախագիծ: Երիտասարդ գիտնականներին խրախուսելու նպատակով ֆինանսավորման է երաշխավորվել ասպիրանտների և երիտասարդ հայցողների 42 ծրագիր: Կազմակերպվել է 10 ասպիրանտների և հայցողների նպատակային ուսուցում արտերկրի լավագույն կենտրոններում:

Արտերկրում գործում է 15 հայագիտական կենտրոն

Անդրադառնալով սփյուռքի հետ կապերին՝ նախարարը կարելի է պետական բյուջեի ֆինանսավորմամբ օտարերկրյա համալսարաններում հայերենի և այլ հայագիտական առարկաների դասավանդմանը: Նախորդ տարի հայագիտական կենտրոններ են ստեղծվել Թրակիայի Դեմոկրիտ համալսարանում (Հունաստան) և Սինալոայի համալսարանում (Մեքսիկա)՝ այդպիսով հայագիտական կենտրոնների թիվը 12 պետությունում հասցնելով 15-ի: 20 երկրի սփյուռքի 220 կրթօջախների համար տպագրվել է ավելի քան 38 000 կտոր գրականություն, կայացել են սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ՝ 18 երկրից 69 ուսուցչի մասնակցությամբ:

Մեծ աշխատանքներ են իրականացվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կրթության իրավունքի ապահովման ուղղությամբ թե՛ հանրակրթության, թե՛ ՄԿՈՒ և թե՛ բարձրագույն կրթության ոլորտներում:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ


Հայրապետական Սուրբ Պատարագ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատգամը՝ Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով

Մայր Աթոռ

Սուրբ Հարության Ծրագալույցի Պատարագ

Յանուն Հոր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ.
ամեն:
«Չսուրբ եւ զհրաշալի եւ զյաղթող զյա-
րութիւնը Քո օրհնենք եւ փառաւորենք»
(Ժամագիրք)



Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,
Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ
Հարության ավետիսն է հնչում այսօր մեր եկե-
ղեցիների սուրբ խորաններից: Սքանչելա-
խորհուրդ ավետիսը հույսով ու հոգեհարկ
զգացումներով է պարուրում հայրենիքի ու
ազգային կյանքի ցավերով ու կորուստներով
դառնացած մեր սրտերը: Կյանքը հաղթանա-
կել է, մահը պարտվել ու խորտակվել: Հա-
վատով ու առ Աստված ապավինությամբ մի-
ասնաբար օրհնաբանենք Տիրոջը ժամասացի
խոսքերով. «Սուրբ եւ հրաշալի եւ հաղթող Քո
Հարությունը օրհնում ենք եւ փառավորում»:

Քրիստոս Իր Հարությամբ մարդկությանը
ազատել է չարի իշխանությունից, ցույց տվել
մերձան եւ սիրո ճանապարհը, հաշտություն
հաստատել մարդու եւ Աստծո միջեւ եւ ըն-
ծայել հավիտենական կյանքի հույսն ու
շնորհը: Աստվածորդու ողորմածությամբ
կյանքի արշալույսն է տարածվել մահվան
խավարի վրա: Կենարար խաչը, որի վրա
հեղվեց Տիրոջ Սուրբ Արյունը, մահվան հան-
դեպ հաղթության նշան է դարձել, Հարության
հավատը՝ չարին պարտության մատնելու
երկնապարզելու ուժ:
Այո՛, սիրելիներ, հաղթող է, սուրբ եւ հրաշ-
ալի Քրիստոսի Հարությունը: Աշխարհի հա-
րափոխիս իրադարձությունների եւ հասկա-
պես բարդ ու դժվարին իրավիճակների մեջ
Հարության շնորհներով հավատացյալները
զորանուն են վեր հանելու փորձություննե-
րից, մերժելու կորստաբեր երեւոյթներն ու
կործանարար մտածումներն ու գործերը,
հաղթահարելու անտաբեր պատերազմների
արհավիրքները, նորոգվելու Տիրոջով, ինչ-
պես որ Սուրբ Գիրքն է վկայում. «Եթե մեկը
Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է»
(Բ Կորնթ. 5:17):
Համայն մարդկությանն այսօր էլ հնչում է
իրավերը առաջնորդվելու աստվածադիր
պատվիրաններով, մահվան հանդիման կեր-
տելու կյանքի հաղթանակը, ամբիտեր պաշտ-
պանը լինելու ճշմարտության ու արդարու-
թյանն եւ առանց Աստծո մեռյալ գոյությունը փո-
խարհելու Տիրոջ հետ հարուցյալ կյանքի: Այս
կոչին ականջալուր, «վասն հավատո, վասն
հայրենյաց» սրբազան ուխտով միաբանված
պատմության հողմերով հիմնական ենք
բազում դժվարությունների ու փորձություննե-
րի: Հարության հավատի վկայությունը նաեւ
մեր օրերում հռչակում է մեր ժողովրդի դա-
վանանքի եւ ազգային սրբազան արժեքներին
հավատարմության, որոնք դարեր շարունակ
երաշխիքն են եղել հայոց ազգի ինքնության ու
լինելության, դարության ու գիտության զար-
գացման: Հարկ է այս արժեքներով սերունդ-
ներ կրթել եւ անաղարտ ու անկորուստ պահ-
պանել մարդկության գիտամշակութային
զանգարանը հարստացրած մեր նախնայաց
ավանդներն ու ժառանգությունը:

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ ի Հայաս-
տան եւ ի սփյուռն, Տիրոջ Սուրբ եւ Հրաշա-
փառ Հարությունը գոտեպնդող խրախուսյալ
է ամենքիս հույսով ու արիությամբ դիմագրա-
վելու մեր երկրի առջեւ ծառայած մարտա-
րավերները՝ հատկապես հետպատերազմյան
այս ծանր շրջանում, երբ բռնազավթված ու
հայաթափված է Արցախը, եւ չեն դադարում
Ադրբեջանի ծավալապաշտական ու սադրիչ
գործողությունները նորանոր պահանջներով,
որոնք անմիջական սպառնալիքներ են ստեղ-
ծում մեր պետության անվտանգությանը:
Հանցագործ դրսեւորումներով շարունակ-
վում են Արցախի պատանդառված քաղաքա-
կան ղեկավարության եւ անօրինաբար գե-
րության մեջ պահվող մեր զավակների նվաս-
տացումները, ինչպես եւ արցախահայության

Մարտի 30-ին՝ երեկոյան, մեր Տեր
եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշա-
փառ Սուրբ Հարության տոնի առի-
թով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ
Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն
Հայոց Կաթողիկոսի առանորդությամբ
Մայր Աթոռի միաբանությունը ճրագա-
լույցի Սուրբ Պատարագին մասնակ-
ցեց Սուրբ Գայանե վանքում: Պատա-
րագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վանորեցի տեսուչ Գերաշնորհ Տեր
Արտակ Եպիսկոպոս Տիգրանյանը:

Մինչ Սուրբ Պատարագը, կատար-
վեց ճաշու երրորդ ժամերգությունը,
ապա կարդացվեցին սուրբգրային ըն-
թերցվածքներ, որից հետո Մայր Աթոռի
չորս միաբան սարկավազներ ընթերցե-
ցին Դանիել մարգարեի բուրբը:



Արտակ Սրբազանը, իր քարոզում
անդրադառնալով Հարության խորհր-
դին, ի մասնավորի նշեց. «Չէ աստ, այլ
յարեաւ» (Ղուկ. ԻԴ 6) խոսքերը, որոն-
ցով Քրիստոսի գերեզման այցելած յու-
ղաբեր կանանց դիմավորեց հրեշտա-
կը, ամենքիս համար հնչում են որպես
ավետիս: Սակայն Քրիստոսի թաղումից
հետո աշակերտների՝ անորոշության
մեջ դեզերող միտքն ի վիճակի չէր ըն-
կալելու այս խոսքերում թաքնված ու-
րախությունը: Անորոշության ու հուսա-
հատության խավարը ցրելու համար,
հարությունից հետո, Քրիստոս տարբեր
վայրերում հայտնվում է Իր աշակերտ-
ներին եւ Իրեն հետեւող բազմաթիվ այլ
մարդկանց:

Այս մաղթանքով էլ Սուրբ Հարության
ավետիսով ողջունում ենք մեր Սուրբ Եկեղե-
ցու Նվիրաբերական Աթոռների գահակա-
լերին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Սեօի Տանն Կիլի-
կիո Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց
Պատրիարք Ամենապատիվ Տեր Նուրհան
արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդ-
նուպոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ
Տեր Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանին,
քույր Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ հայ-
ցելով Ամենակալ Աստծո զորակցությունը
իրենց առաքելության արդյունավորման մեջ:
Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն
ենք հղում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր
դասին եւ հավատավոր համայն Մեր ժողովր-
դին ի հայրենիս եւ ի սփյուռնս:
Սիրելիներ, Սուրբ եւ Հրաշափառ Հարու-
թյան տոնի այս լուսառատ օրը մեր սրտերից
աղոթք բարձրացնենք առ Ամենակալն Աստ-
ված, որ աշխարհին պարզելի խաղաղու-
թյուն ու բարօրություն, Իր ամենախնամ
Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի մեր
հայրենիքի վրա եւ օրհնի ու երկնահեղ
շնորհներով պայծառացնի ազգս հայոց՝ ապ-
րելու ապահով ու անվտանգ կյանքով եւ փա-
ռավորելու Ամենասուրբ Երրորդությանը
այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

**Քրիստոս յարեալ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի**



Այնուհետեւ, անդրադառնալով
Փրկչի հետհարության երեւումներին,
մասնավորապես՝ Ղուկասի Ավետարա-
նում հիշատակվող Էմմավուսի ճամ-
փորդների դրվագին, պատարագիչ Սր-
բազանը ընդգծեց. «Սուրբ Հարության
Ծրագալույցի այս երեկոյան տեսնում
ենք, որ Քրիստոսի հետ անցել ենք եր-
կար մի ճանապարհ, ավելի երկար,
քան Երուսաղեմն Էմմավուսից բաժա-
նող տասնմեկ կիլոմետրերը: Եկել ու
հասել ենք մի հանգրվանի, որտեղ մե-
զանից յուրաքանչյուրը պետք է կատա-
րի իր կյանքի կարեւորագույն որոշու-
մը՝ ընդունել Հարուցյալ Տիրոջը մեր հո-
գիներում ու սրտերում»:

Վերջում Արտակ Սրբազանը, հորդո-
րեց հավատացյալ ժողովրդին Հարուց-
յալ Աստվածորդու ձեռքն ամուր բռնած
անսայթաք քայլել դեպի հավիտենա-
կան կյանք տանող ճանապարհով, որ-
տեղ գրկաբաց մեզ է սպասում բազմա-
գույն եւ սիրող հայրը:

Հավարտ Սուրբ Պատարագի՝ Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսը բարձրացավ
Սուրբ Խորան եւ Սուրբ Սեղանի կանթե-
ղից վառեց Տեր Հիսուս Քրիստոսին
խորհրդանշող կենսատու մոմը, որը
բաշխվեց հավատացյալներին:

Պատարագի սրբազան արարողու-
թյունից հետո Մայր Աթոռի միաբանու-
թյունը մեկտեղվեց Վեհարանում, ուր,
նախագահությամբ Հայոց Հովվապե-
տի, կատարվեց Սուրբ Հարության
տնօրհներ:

Խորհուրդներ մայրերին. Ժողովրդական բժշկության գանձարանից

սկզբը՝ նախորդ համարում

Ընկերություն եւ կոկորդ

Խոսակցական լեզվում մարդու ընկերություն եւ կոկորդը, սովորաբար, անվանում են կոկորդ: Իրականում ընկերությունը շնչառական եւ մարտդական ուղիների վերին հատվածն է, իսկ կոկորդը գետնեղված է ընկերության հետո: Կոկորդի խնամքը մեծապես նպաստում է օրգանիզմի ավելի խորը հատվածների՝ կերակրուղիների եւ շնչուղիների պաշտպանությանը: Այդ հարցում շատ կարեւոր է ընկերության մշակման ղեկը: Նախքան բերանի խոռոչում հայտնվելը՝ սնունդը ենթարկվում է հոտառական «գնահատման», որից հետո միայն ուղեղը որոշում է, ներս թողնել սնունդը, թե ոչ: Բերանի խոռոչում սնունդն անցնում է երկրորդ որակական գնահատումը լեզվի ընկալիչների (ռեցեպտորների) միջոցով: Բերանի խոռոչում սնունդը մանրացվում է եւ թքի միջոցով ենթարկվում կենսաքիմիական մշակման: Թքի մեջ հատուկ ֆերմենտի առկայության շնորհիվ տեղի է ունենում սննդի մանրէաբանական մշակում եւ ածխաջրերի ակտիվ տրոհում:

Սնունդը բերանի խոռոչից անցնում է ընկերության մշակման արանքով՝ ոռոգվելով վերջիններիս կողմից արտադրված ավազային հեղուկով: Նշիկներն ունեն իմունապաշտպանիչ գործառնություն: Նրանք ազդանշաններ են ուղարկում կենտրոնական իմունային համակարգին սննդի մեջ վնասակար նյութերի առկայության մասին: Դա օգնում է աղետամոլոցային համակարգի իմունային օրգաններին նախապես պատրաստվել այդ մանրէների հետ հանդիպմանը: Բերանի խոռոչում լավ մանրացված եւ թքի հետ խառնված սնունդը ավելի հեշտ է կուլ գնում եւ սահուն անցնում կերակրափողով դեպի ստամոքս:

Կոկորդի խնամքը

Կոկորդի խնամքը պետք է սկսել վաղ տարիքից: Խնամքի հիմնական նպատակը կոկորդն ու արտաբերությունն է, որն անհրաժեշտ է կատարել ամենօրյա ռեժիմով: Կոկորդի խնամքի ամենապարզ միջոցը ողողումներն են: Այսօր երեխաներին վաղ տարիքից սովորեցնում են մաքրել ատամները խոզանակով՝ մոռանալով, որ երեխայի առողջության համար պակաս կարեւոր չէ կոկորդի մաքրությունը: Ողողումը պետք է անել առավոտյան եւ երեկոյան՝ սկսելով գոլ ջրից եւ ժամանակի ընթացքում անցնելով ծորակի ջրի ջերմաստիճանին: Լավ կլինի, եթե ողողումները կատարեք երեխայի հետ միասին: 2-3 տարեկան ինչուս ձգտում են ընդօրինակել մեզ: Կոկորդի ողողումները, թքի խնամքը եւ օրգանիզմի ընդհանուր կոկորդը կօգնեն երեխային զերծ պահել վերին շնչառական ուղիների, մասնավորապես՝ կոկորդի բորբոքային հիվանդություններից եւ դրանց բարդություններից:

Ինչպե՞ս ծիշտ ողողել կոկորդը: Բաժակի մեջ գոլ ջուր կամ թույլ աղաջուր լցրեք, մի կուն արեք, գլուխը հետ գցեք եւ սկսեք ջուրը «ողողացնել» կոկորդի մեջ: Այդ ծայրերը զվարճացնում են երեխաներին, եւ շուտով իրենք էլ են սովորում նույն կերպ ողողել կոկորդը: Մի քանի վայրկյան «ողողացնելուց» հետո ջուրը թափեք եւ կրկնեք գործողությունը: Իհարկե, սկզբում երեխաները դժվարանում են ծիշտ կատարել ողողումը, սա-

կայն ժամանակի ընթացքում դա դառնում է սովորություն, որը կանխարգելում է զանազան վարակների, այդ թվում եւ՝ անգինաների զարգացումը:

Անգինա

Անգինան (angina-սեղմել, ճնշել), որպես կոկորդ-ընկերության հիվանդություն, հայտնի է վաղ ժամանակներից: Անգինան վարակիչ հիվանդություն է, որի հարուցիչներն են ստրեպտոկոկերը, ստաֆիլոկոկերը, աղեմոկոկները եւ այլն: Մանրէները օրգանիզմ կարող են թափանցել նշիկների լորձաթաղանթում գտնվող վարակի օջախի ակտիվացման ժամանակ: Տարբերում են կատառալ (համեմատաբար թեթև) եւ թարախային անգինաներ:

Կատառալ անգինան սկսվում է աննկատ չորության եւ քերծվածքի զգացում ընկերության, կլման դժվարացում, ջերմության բարձրացում մինչեւ 38 աստիճան: Հիվանդությունը տևում է 3-4 օր: Կարեւոր է առաջին իսկ նշանների դեպքում սկսել պայքարը անգինայի զարգացման դեմ: Ակտիվ ողողումները գոլ ջրով կամ դեղաբույսերի թուրմերով, տեղային իմունիտետի բարձրացումը եւ «մրսածի խնամքի կանոններին» հետևելը կարող են կանխել հիվանդության անցումը ավելի բարդ փուլերի: Անգինայի ժամանակ առաջին հերթին պետք է ողողումներով մաքրել նշիկները: Ողողումների համար կարող եք օգտագործել եղեսպակի, երիցուկի, ուրցի, արեքուրիկի, կաղնու կեղևի եւ այլ հակաբորբոքային ազդեցություն ունեցող դեղաբույսերի թուրմեր:

Թարախային անգինաները շատ վտանգավոր են բարդությունների զարգացման տեսակետից: Այս դեպքում պետք է անհապաղ դիմել բժշկի: Թարախային անգինան զարգանում է աստիճանաբար՝ օրերի եւ նույնիսկ ամիսների ընթացքում: Պատճառը՝ նշիկների խոռոչներում ախտածին միջավայրի առաջացումն է: Թարախային անգինան արտաբերություն է ջերմության բարձրացմանը, թուլությանը, նշիկների թարախային բորբոքումով: Վաղ միջնադարում բժիշկները անգինան համարում էին օրգանիզմի կողմից ընտրված ինքնուրույն ապաքինվելու միջոց: Համաձայն Հիպոկրատի տեսության, մոտ մեկ շաբաթ օրգանիզմն ինքնուրույն է պայքարում ստեղծված վիճակից դուրս գալու համար: Միջամտելիս՝ մեք պետք է շարժվենք այդ նույն սկզբունքով եւ օգնենք օրգանիզմին իրագործել իր ընտրած բուժման եղանակը, այն է՝ դատարկել նշիկների խոռոչները ախտածին նյութերից: Այդ իսկ պատճառով կոկորդի ողողումները հանդիսանում են կանխարգելիչ եւ բուժիչ միջոցառումներ բոլոր տեսակի անգինաների ժամանակ:

Ականջը

Ականջը լսողության եւ հավասարակշռության օրգան է, որը բաղկացած է շրջակա միջավայրի հետ անմիջական շփում ունեցող արտաքին ականջից, միջին ականջից եւ ներքին ականջից: Ներքին ականջում են տեղակայված հավասարակշռության եւ լսողության ընկալիչները: Արտաքին ականջը ներառում է ականջախեցին եւ լսողական արտաքին անցուղին: Վերջինս բավականին լայն է, բայց մոտավորապես կենտրոնում այն նեղանում է եւ դառնում նեղուցանման:

Դա պետք է նկատի ունենալ ականջի օտար մարմինները հեռացնելիս: Արտաքին լսողական անցուղու առջեւի պատը սահմանակից է ստորին ծնոտի հողին, ուստի դրա բորբոքման ժամանակ բերանը բացելիս ականջը ցավում է:

Արտաքին լսողական անցուղին ավարտվում է թմբկաթաղանթով, որը միջին ականջը սահմանազատում է արտաքինից: Լսողական անցուղու մեջ կան բազմաթիվ մանր մազիկներ եւ հատուկ գեղձեր, որոնք արտադրում են կաշուն նյութ՝ ականջածուծում: Մազիկներն ու ականջածուծները պաշտպանում են ականջը փոշուց, մանրէներից, միջատների ներթափանցումից եւ սնկերի զարգացումից: Ականջը ինքնամաքվող օրգան է. խոսելու եւ ծամելու ժամանակ ծոմնեքով պատված մաշկի եղջրացած թեփուկները մազիկների օգնությամբ դուրս են բերվում ականջից դեպի ականջախեցի:

Մարդու օրգանիզմի յուրաքանչյուր օրգան ունի իր դերն ու նշանակությունը: Ականջի բլթակը, բացի ականջողի կախիչ ծառայելուց, ունի ջերմահաղորդիչ հատկություններ, ինչի շնորհիվ՝ մասնակցում է օրգանիզմի, մասնավորապես՝ ուղեղի ջերմակարգավորմանը: Նկատած կլինեք, թե ինչպես են մատների այրվածք ստացած մարդիկ առաջին հերթին բնագոյաբար բռնում ականջի բլթակը: Թեեւ ականջը ինքնամաքվող օրգան է, այնուամենայնիվ շատ կարեւոր է այն ճիշտ խնամել:

Ականջի խնամքը

Լսողական արտաքին անցուղին հատուկ խնամքի կարիք չունի, քանի որ ինքնամաքման իր բնական մեխանիզմը լիովին ապահովում է պատշաճ մաքրությունը: Խնամքի կարիք ունի միայն ականջի խեցին, քանի որ դրանում են կուտակվում ավելի խորը հատվածներից դուրս մղվող ականջածուծները եւ մաշկի եղջրացած թեփուկները:



Նկար 4

Ականջի մեջ չի կարելի խորը մտցնել որեւէ առարկա, այդ թվում՝ նաեւ ծայրին բամբակ փաթաթած չոփիկ: Դրանով դուք կարող եք վնասել ականջի նուրբ մազածածկույթը, ինչի պատճառով կարող է առաջանալ ականջածուծի կուտակում եւ խցանում: Այդպիսի անբնական միջամտության հետեւանքով ականջի խորը հատվածներ կարող են ներթափանցել զանազան ախտածին մանրէներ (տե՛ս՝ նկար 4):

Ականջի խեցին պետք է օժանոժվել լվանալ դրսից եւ ներսից: Օճառի փոխարեն կարելի է օգտագործել հիգիենիկ խոնավ անձեռոցիկներ: Խեցին պետք է լվանալ նաեւ դրսից՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ականջի հետեւի ծալքերին: Լվանալուց հետո ականջը չորացրեք փափուկ լաթով կամ անձեռոցիկով: Կարելի է խեցու ներսի մասը թեթեւ-

ակի մաքրել ցուցամատի վրա փաթաթած շորով: Հարմար է ականջի լվացումը կատարել ցնցուղ ընդունելիս:

Ականջի օտար մարմինները

Առավել հաճախ օտար մարմինները հայտնվում են փոքր երեխաների ականջներում, ինչը պայմանավորված է երեխաների հետաքրքրասիրությամբ: Փոքրիկները չեն կարողանում բացատրել իրենց անհանգստության պատճառը: Օտար մարմնի մասին կարող եք կռահել նկատելով, որ փոքրիկը հաճախակի թորում է ականջը: Ի տարբերություն ականջի բորբոքման, որն ուղեկցվում է ցավով, հարբուխով եւ լացով, օտար մարմինը սկզբնական շրջանում միայն թոր է առաջացնում:

Չի կարելի փորձել օտար մարմինը երեխայի ականջից հեռացնել ձեռքի տակ եղած գործիքներով, քանի որ վերջիններս կարող են վնասել ականջի նուրբ մակերեսայինները: Օտար մարմնի կասկածի դեպքում պետք է անհապաղ դիմել բժշկի: Եթե այդպիսի հնարավորություն չկա, պապ կարելի է փորձել հեռացնել օտար մարմինը հետեւյալ կերպ: Պառկեցրեք երեխային եւ ականջի մեջ կաթիլ-կաթիլ գուլացրած բուսայուղ կաթեցրեք՝ մինչեւ այն լցնի ամբողջ խեցին: Այնուհետեւ շրջեք երեխային ականջը դեպի ներքեւ եւ աշխատեք լայնացնել անցուղին՝ ականջի խեցին դեպի հետ եւ վերեւ ձգելով: Այդ գործողությունը կարելի է կրկնել մի քանի անգամ:

Մրսածության հիվանդություններով հաճախ տառապող երեխաների կոփումը

Մրսածի խնամքի չորս կանոններն ընդհանուր են թե՛ երեխաների, եւ թե՛ մեծահասակների համար: Դրանք ընդհանուր են մրսածության բոլոր տեսակի, այդ թվում՝ վերին շնչուղիների բորբոքային հիվանդությունների դեպքում: Ավելորդ չի լինի մեկ անգամ եւս անդրադառնալ շնչուղիների հիվանդություններին նվիրված բաժնիներում նկարագրված կանխարգելիչ եւ կոփող միջոցառումներին:

Գոլ ջրով կամ թույլ աղաջրով կոկորդի ողողումները պետք է կատարել առավոտյան եւ քնելուց առաջ թե՛ մրսածության դեպքում, եւ թե՛ որպես կանխարգելիչ միջոց: Ողողումները մաքրում են նշիկները ախտածին մանրէներից եւ կանխարգելում հիվանդության հետագա զարգացումը: Ողողումների համար կարելի է օգտագործել նաեւ դեղաբույսերի թուրմեր: Երեխայի լավանալուց հետո կոկորդի կոփման նպատակով ջրի ջերմաստիճանը պետք է մարմնի ջերմաստիճանից աստիճանաբար՝ մոտավորապես մեկ անսվա ընթացքում, հասցնել ծորակի ջրի ջերմաստիճանի եւ շարունակել սառը ողողումները:

Քիթը պետք է մշտապես մաքրուր պահել՝ օրվա ընթացքում խնչելով մաքրել, առավոտյան եւ քնելուց առաջ լվանալ գոլ կամ սենյակային ջերմաստիճանի ջրով կամ աղային թույլ լուծույթով: Քթի կոփման նպատակով կարելի է ջրի ջերմաստիճանը աստիճանաբար նվազեցնել՝ հասցնելով մինչեւ ծորակի ջրի ջերմաստիճանի:

շարունակությունը էջ 7

Արժեքավոր դասագիրք

Գրականության պատմությունը՝ աշակերտին հոգեհարազատ մեթոդով

Արժեքավոր գրքի ծնունդը միշտ մեծ իրադարձություն է, որը մեր ժողովուրդը համեմատել է երեխայի լույս աշխարհ գալու հետ: Գիշտ այդպես էլ Ալբերտ Մակարյանի և Թամարա Թովմասյանի՝ 10-րդ դասարանի աշակերտների համար գրված հայ գրականության դասագիրքն է:


Անկեղծ ասած, երկար տարիներ են անցել այն օրից, երբ ինքս տասներորդի էի և յուրօրինակ ակնածանքով էի բացում հատկապես գրականության դասագիրքը, քանի որ այն համարում էի իմ հետագա կյանքի ուղեցույցը: Իրոք, երբ ես ընդունվեցի եւ հաջողությամբ ավարտեցի Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ամբողջ կյանքս, ասես, լուսավորվեց իմ մասնագիտության հանդեպ տածած սիրով, փորձեցի նույնը ներարկել նաեւ իմ աշակերտներին:

Եվ ահա տարիներ անց հետաքրքրությամբ բաց արեցի այս նոր դասագիրքը, որն անմիջապես գրավեց ուշադրությունս: Ինձ ծանոթ էին պրոֆեսոր Ալբերտ Մակարյանի, անվանի մանկավարժ Թամարա Թովմասյանի եւ, հատկապես՝ գրքի մասնագիտական խմբագիր, դպրոցի հիմնադիր գիտակ Բուրիսա Նազարյանի անունները, որոնք հայտնի են եւ ուսուցիչներին, եւ, ընդհանրապես, լայն հասարակությանը:

Առաջին նյութը, որին ես վերաբերվեցի որոշ անհանգստությամբ, Խաչատուր Աբովյանին նվիրված հատվածն էր: Նորություն չի լինի, եթե ասեմ, որ շատ աշակերտների համար ո՛չ Աբովյանը, ոչ էլ «Վերք Հայաստանի» վեպը մատչելի չեն, հաճախ ընկալվում են բարդ ու անհասկանալի: Բայց, ուրախությամբ պիտի նշեմ, որ քսան էջում ամփոփված այդ հատվածն ինձ անմիջապես գրավեց իր անմիջականությամբ, պարզությամբ եւ, միեւնոյն ժամանակ՝ խորությամբ: Այն գրված է գրավիչ, պարզ ու հետաքրքիր, պատմողական մեծ վարպետությամբ: Անվանի գրականագետ Ալբերտ Մակարյանը ընտրել է ոչ թե գիտական վերամբարձ ոճ, ինչպիսին հաճախ ունենում են դպրոցական դասագրքերը, այլ՝ աշակերտների հոգուն հարազատ, մտերմիկ ձե-

ով ներկայացված պատմողական մի հրաշալի եղանակ, որով նկարագրված են մեծ լուսավորչին վերաբերող հետաքրքիր դրվագները՝ սկսած մանկությունից: Դրանց հաջորդում են Մայր աթոռում ուսանելու տարիները, երբ Աբովյանը փորձում էր ընտելանալ հոգեւոր ծառայությանը: Սակայն նրա երազանքը բարձրագույն կրթություն ստանալն էր, եւ ճակատագրական հանդիպումը Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի հետ դեպի Արարատի գագաթը վերելքի ճանապարհին, դարձավ նրա կյանքի նոր փուլի սկիզբը: Չցանկանալով ներկայացնել բոլոր մանրամասները՝ հանդգնեցի մի շնչով պիտի կարդան ամբողջ նյութը, խորապես հուզվեմ ծանոթանալով գրողի՝ դրամատիկ իրադարձություններով լի կյանքին եւ, որ ամենակարեւորն է, ողջ էությամբ պիտի սիրեն մեր մեծ լուսավորչին, «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոս Աղասուն եւ նրա զինակիցներին: Այս նոր դասագիրքը նաեւ աշակերտին կծանոթացնի Խաչատուր Աբովյանի առաջադիմական գաղափարներին, նրա լուսավորչական գործունեությանը եւ հայրենասիրական մեծ ոգուն: Ես հասուն մարդ եմ, սակայն Աբովյանին նվիրված հատվածն ընթերցելիս ինձ թվաց, թե կարդում եմ մի հրաշալի հեքիաթ, որը, գուցե, այնքան էլ չէի սիրել պատանությանս տարիներին:

Նույն ոճով եւ մտերմիկ ու հյութեղ լեզվով են գրված հաջորդ բոլոր հատվածները: Ահա Մուրացանը (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), որին ծնված օրից վիճակված էր տեսնել անհավատալի տառապանքներ ու ողբերգություն, ում կյանքը մի ցնցող դրամա էր: Բայց այդ ամենով հանդերձ՝ մեր դիմաց հառնում է տաղանդաշատ արձակագիրը, պատմության գիտակը, լեզվաբանն ու մեծ հայրենասերը: Ալբերտ Մակարյանին հաջողվել է համոզիչ ներկայացնել նաեւ «Գեւորգ Մարգ-պետունի» վեպում գործող բազմաթիվ հերոսներին, որոնք միահյուսվում են ներքին բարդ կապերով եւ անձնական հարաբերություններով: Միեւնոյն ժամանակ, յուրաքանչյուր կերպար բացահայտվում է իր անհատա-



կան, եզակի հատկանիշներով: Հմուտ ոսկերչի նման՝ հեղինակը կարողացել է գտնել նրանցից յուրաքանչյուրի խոսքի եւ գործողությունների հոգեբանական դրդապատճառները: Հմտորեն են ներկայացված կույր վրիժառուն՝ Սահակ Սեւադան, Տիկ Ամրամը, Աշոտ Երկաթը, Սահականույշ թագուհին եւ, իհարկե, գլխավոր հերոսը՝ Գեւորգ Մարգպետունին: Հանգամանորեն նկարագրելով մեծ գրողի անձնական կյանքի մանրամասները՝ Մակարյանը փորձում է դրանք գուզակցել երկի ընդհանուր հյուսվածքի հետ՝ միաժամանակ անդրադառնալով վեպի պատմականությանն ու դարաշրջանի ոգուն: Այդպիսով՝ հրաշալի վեպը դասագրքում արժանացել է նույնքան հրաշալի վերլուծության՝ ապահովելով դասագրքի հաջողությունը:

Նույնքան վարպետորեն է ներկայացված նաեւ դասագրքի երրորդ հեղինակը՝ Ալեքսանդր Շիրվանզադեին: Կրկին մտերմիկ ոճ, գրողի մանկության պատկերներ, քաջարի տատ, մտերիմ մարդիկ ու ազգականներ՝ Կոստան Ջարյան, Հովհաննես Աբելյան, կովարար հորեղբայր եւ ինքը՝ մի փոքրիկ մանչուկ, ով ցավ էր ապրում թի ծառից պոկված ոստերի հա-

մար: Գրքում կան աշակերտների համար հետաքրքրություն ներկայացնող մանրամասներ. մի սեւ գառնուկ, որը սիրուն դնչիկ ուներ ու փոքրիկ եղջյուրներ, մանուկ Ալեքսանդրի սիրելին էր, բայց տղան գիտեր, որ այդ քնքուշ էակը մի օր մորթվելու է, եւ ընկնելով հոր ոտքերը՝ աղաչում-պաղատում է, որ չմորթի, բայց ապարդյուն: Եվ գառնուկի մասին հուշը երբեք չի լքում վիպասանին. նույն զգացումներով է տոգորվում նաեւ ընթերցողը:

Շիրվանզադեի կյանքից մեկ ուրիշ դրվագ, համոզված եմք, նույնպես սիրով պիտի ընդունեն աշակերտները եւ փորձեն համեմատել պատանի Ալեքսանդրին իրենց հետ:

Մի անգամ վարժապետը նրա վրա բարկանում է՝ դասը վատ սովորելու համար եւ, բացելով դասագիրքը, խստորեն ասում է.

- Այ, այստեղից՝ այստեղ վաղը ջուր արած կգաս դպրոց:

Տղան, պարզամտորեն, ուղիղ հասկանալով վարժապետի ասածը, հաջորդ օրը՝ դասի գալուց առաջ, դասագիրքը մի լավ թրջում է հոսող ջրի տակ եւ ներկայանում ուսուցչին:

Կարդալով այս փոքրիկ իրական նովելները՝ աշակերտների համար սիրելի է դառնում այն հեռավոր միամիտ մանչուկը, որը հետագայում պիտի հայ գրականության խոշորագույն դեմքերից մեկը դառնար, գրեր «Նամուսը», «Քաստը», «Պատվի համարը» եւ այլ ստեղծագործություններ: Հենց նման մտերմիկ մանրամասներն են պատանի ընթերցողների սրտերը լցնում հայ գրականության եւ նրա հեղինակների նկատմամբ հարգանքով ու սիրով, նրանց կարդալու եւ ճանաչելու ձգտումով:

Ավելորդ է ասել, որ նույն սկզբունքով եւ նույն վարպետությամբ են շարադրված դասագրքի՝ բոլոր բաժինները, որոնցից յուրաքանչյուրը, կարծես, մի առանձին դիմանկար է, կենսագրական էտյուդ, ճշգրիտ եւ հյութեղ, ներծծված նաեւ աշակերտի նկատմամբ տածած ջերմ սիրով:

Գոհար Մեհեր-Սեֆուլնիսյան
Երեւանի թիվ 168 հիմնական դպրոցի սնօրեն

Խորհուրդներ մայրերին. ժողովրդական բժշկության գանձարանից

սկիզբը՝ էջ 6

Տա՛ք պահեք երեխայի ոտնաթաթերը: Հիվանդ մարդը շատ զգայուն է ցրտի նկատմամբ: Փորձը ցույց է տալիս, որ երեխաները հաճախ հիվանդանում են ոտնաթաթերի սառչելու պատճառով: Հիվանդ ժամանակ ցանկալի է երեխային տաք գուլպաներ հագցնել եւ ոտքերը տաք ջրի մեջ դնել: Առողջ երեխայի ոտնաթաթերի կոփումը չափազանց կարեւոր կանխարգելիչ միջոց է: Այն պետք է սկսել հատակին գուլպաներով բռնիկ քայլելուց: Որոշ ժամանակ հետո կարելի է գուլպաները հանել՝ աստիճանաբար անցնելով բռնիկ քայլելուն: Կոփումը

շատ օգտակար է կատարել բնության մեջ. թողեք երեխային քայլել տաք հողի եւ քարերի վրա սկզբում գուլպաներով, իսկ հետո նաեւ բռնիկ: Ոտնաթաթերի եւ կոկորդի վիճակի կապի մասին վկայում է ստորեւ նկարագրված գիտափորձը:

Ես առիթ եմ ունեցել մասնակցելու անգիմաների բուժման հետ կապված մի հետազոտության, որի ժամանակ անգիմայով հիվանդ ծովախոզուկների վրա փորձարկում էին մի խումբ դեղամիջոցների ազդեցությունը: Այդ գիտափորձի ժամանակ անհրաժեշտ էր կենդանիներին արագ հիվանդացնել անգիմայով: Ծովախոզուկների ոտքերը մի քանի րոպե պահում էինք սառցախառը ջրի մեջ,

որից հետո նրանց մոտ առաջ էին գալիս անգիմայի բոլոր նշանները:

Եթե նկարագրված կանոններին հետեւելը գոնե որոշ չափով կօգնի պահպանել երեխայի առողջ նշիկները եւ խուսափել վիրահատությունից, դա կարեւոր արդյունք կարելի է համարել: Առողջ նշիկները ամբողջ կյանքի ընթացքում երեխային կպաշտպանեն շնչառական եւ աղեստամոքսային համակարգի օրգանների վտանգավոր վարակներից եւ թուլներից:

Սուրեն ԳՅՈՒԼԽԱՍՅԱՆ
Քիթ-կոկորդ-ականջաբան,
բժշկական գիտությունների
թեկնածու



Փորձիր լրացնել


Ամենայն ժամ բազմապատկի՛ր գիտելիքդ

Ուղղահայաց

1. Հավազգիների կարգի փասիանների ընտանիքի ամենափոքր թռչունը: 2. Առասպելական գազան՝ կանացի կերպարանքով: 3. Հին Հունաստանի լեգենդար բանաստեղծ: «Իլիական» եւ «Ոդիսական» պոեմների հեղինակ: 4. Խոշոր ասուլ: 5. Լսիր, որդիս ... որպես, Սիրող ըն մոր խոսքը սրտանց, Այսօրվանից համձնում են քեզ Հայոց լեզուն հազարազանծ (Ս.Կապուտիկյան): 6. Ռաջ ... (ծն.1924), հնդիկ ճանաչված դերասան, կինոռեժիսոր («Թափառաշրջիկ», «Պարոն 420»): 7. Պակիստանցի ականավոր ֆիզիկոս, աշխարհի մի շարք երկրների ԳԱ պատվավոր անդամ, Նոբելյան մրցանակի դափնեկիր: 8. ... Բ Սեծ (մ.թ.ա.140-մ.թ.ա.55), հայոց թագավոր, պետական եւ ռազմական գործիչ: 9. Լարային կամիթավոր երաժշտական գործիք: 10. Քրոնոսի դուստրը, Պոսեյդոնի եւ Զեւսի քույրը: Ըստ դիցաբանության ճանաչվել է որպես երկրագործության եւ հողի արգավանդության աստվածուհի: 11. Քուն թե ... օրիս շատը երազ եղավ, անցկացավ, Երազն էլ, նուրբ ու խուսափուկ, վազ եղավ, անցկացավ, Վազ անցան երազ, մուրազ, ու չհասա ոչ մեկին, Կյանքս թեթեւ տանուլ տված երազ եղավ, անցկացավ: 12. Նազարեթ Երվանդի ... (ծն.1921), նշանավոր հայ ֆիզիկոս, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1984): 13. Վիկտոր Բարդուղիմիոսի ... (ծն.1924), ականավոր հայ ֆիզիոլոգ, ՀՍՍՀ ակադեմիկոս, ՀՍՍՀ ԳԱ փոխարհագրագետ (1972-ից): 14. Գյուղ ՀՍՍՀ Հրազդանի շրջանում, Հրազդան գետի աջ ափին, Ծաղկունյաց լեռների հարավային ստորոտին: 15. Լինելու ասես մի վարդենի, Թե՞ ծաղկալից գարնան ձոր, Կուրծքն՝ հասակի ծառը զուգող ...ի զույգ խնձոր (Հովհ.Շիրազ): 16. Եբոր ծիծառն իր բույն դառնա, Եբոր ծառերն հազմին տերեւ: Ցանկան տեսնել զիմ ... Աշխարհ՝ որ ինձ ետար արեւ (Ն.Ռուսինյան): 17. Սպայական կոչում: 18. Մեկ սենյականոց անհատական տուն (քաղաքային կամ գյուղական)՝ կից ոչ մեծ հողամասով: 19. Հիշողության լրիվ կամ մասնակի կորուստ: 20. Երկծայն երգեցողության ձև, երբ փոխեփոխ մեկը մյուսին պատասխանելով երգում են երկու երգիչ, երգիչ եւ երգչախումբ կամ երկու երգչախումբ: 21. Յերիք է, Մուսա՛, երկինքը վկա, էլ համբերելու սիրտ ու տեղ չկա, Էնպես կանեմ քեզ, որ դու մոռանաս Արյուն ու գարուն, պոետ ու ... (Հովհ. Թումանյան): 22. Արշակ Հովսեփի ... (1882-1942), նշանավոր հայ մաթեմատիկոս, մանկավարժ, թարգմանիչ: Երեւանի համալսարանի պրոֆեսոր: 23. Գեղարվեստական գրականության էպիկական ժանր: 24. Ես լավության խոսքն են ասում, Որ ժրպտում է մեր սրբոտին, Ո՞վ չի սիրում, թեկուզ դուլձման, Լավ ...ը, լավ մարդին (Հովհ.Թումանյան): 25. Պարսկական արծաթյա դրամ: 26. Անտառների եւ դաշտերի աստվածուհի, կենդանիների հոտերի հովանավորը ըստ հունական դիցաբանության: 27. Անտիկ փիլիսոփայության կատեգորիա, որն արտահայտում է իրականության օրինաչափությունների ընդհանրացված ըմբռնումը: 28. Վիպա-քնարական բնույթի գրական-բանասիրական ստեղծագործություն, պատմական որեւէ իրադարձության մասին:

Հորիզոնական

4. Ֆրանց ... (1791-1867), գերմանացի ականավոր լեզվաբան, պատմա-համեմատական լեզվաբանության հիմնադիր: 5. Միներալ շերտավոր սիլիկատների ենթախմբից: 6. Կարմիր, կարմրագույն, ծիրանագույն, ալ-կարմիր: 7. Գետ հայկական լեռնաշխարհում: Միանալով արեւմտյան Եփրատին առաջացնում է Եփրատ գետը: 8. Առյուծի մարմնով եռազուլիս իրե՛ք ըստ հին հունական դիցաբանության: 9. Նա ... է զմրուխտ գետի, Ցնորքներիս սիրելին, Դիցուհին է իմ վառ սրտի, Վառ երգերիս նազելին (Ավ.Իսահակյան): 10. Անտոնին ... (1784-1843), չեխ գեղանկարիչ, գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիրներից: 11. Հայ ականավոր մարշալ, ռազմական գործիչ, Խորհրդային Միության հերոս, բազմաթիվ մեդալների ու շքանշանների ասպետ: 12. Հովհաննես Ստեփանի ... (1894-1967), Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս: ՍՍՀՄ ԳԱ անդամ, ՀՍՍՀ ԳԱ պատվավոր անդամ: 13. Հայկական հեթանոսական տոմարի ամիսների 4-րդ օրվա անունը: 14. Թագավորի կամ իշխողի անմիջական շրջապատը՝ կազմված երկրի բարձր խավի ներկայացուցիչներից: 15. Արուսյակ Մեսրոպի ... (1841-1907), առաջին պրոֆեսիոնալ դերասանուհին: 1866-ին նա Ս.Էքեշյանի հետ ստեղծել է սեփական թատերախումբը: 16. Ստեփան Արամայիսի ... (ծն.1930), հայ նշանավոր տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր (1966), պրոֆեսոր (1970): 1983-ից ՍՍՀՄ Պետականի նախագահի տեղակալ: 17. Աբրահամ Մոսեելի ... (1881-1963), սովետական ականավոր փիլիսոփա, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: 18. Լեւ Դավիթովիչ ... (1908-1968), սովետական տաղանդավոր ֆիզիկոս, եղել է աշխարհի մի շարք երկրների ԳԱ պատվավոր անդամ: Արժանացել է Նոբելյան մրցանակի: 19. Գետ Հայաստանում Սեւանի ավազանում: Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի արեւելյան լանջից եւ թափվում Սեւանա լիճ: 20. Սերգեյ Իոսիֆի ... (ծն.1924), հայ հանրաճանաչ կինոռեժիսոր: Նրա ստեղծագործությանը բնորոշ է սերը ժողովրդական արվեստի, ժողովրդի անցյալն ու ներկան սնող մշակութային արժեքների նկատմամբ: 21. Իլյա Եֆիմովիչ ... (1844-1930), ռուս ականավոր նկարիչ: Նրա «Շիկահեր կինը» դիմանկարը պահվում է Հայաստանի պետական պատկերասրահում: 22. ... Անհաթ, V-VI դարերի հայ ճանաչված փիլիսոփա, նետալատոնական ուղղության հետևորդ: Հին հայկական փիլիսոփայության աշխարհիկ ուղղության հիմնադիր: 23. Դու հնչեցիր պառնասում, Երբ Արամազդը հաղթական ...ները քշեց երկնքից Դեպի անդունդ անսահման (Ս.Նալբանդյան): 24. Որեւէ պետության կողմից այլ պետության կամ ժողովրդի տերիտորիալ ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի գործադրում: 25. XV դարի հայ գրիչ: Կաֆայի (այժմ Թեոդոսիա) գրչական դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչ: 26. Մաքուր, անարատ, սուրբ, անբիծ: 27. Օդազնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչություն ԱՄՆ-ում:



չության ազգային դպրոցի հիմնադիրներից: 16. Հայ ականավոր մարշալ, ռազմական գործիչ, Խորհրդային Միության հերոս, բազմաթիվ մեդալների ու շքանշանների ասպետ: 20. Հովհաննես Ստեփանի ... (1894-1967), Խորհրդային Միության նավատորմի ծովակալ, Խորհրդային Միության հերոս: ՍՍՀՄ ԳԱ անդամ, ՀՍՍՀ ԳԱ պատվավոր անդամ: 24. Հայկական հեթանոսական տոմարի ամիսների 4-րդ օրվա անունը: 26. Թագավորի կամ իշխողի անմիջական շրջապատը՝ կազմված երկրի բարձր խավի ներկայացուցիչներից: 27. Արուսյակ Մեսրոպի ... (1841-1907), առաջին պրոֆեսիոնալ դերասանուհին: 1866-ին նա Ս.Էքեշյանի հետ ստեղծել է սեփական թատերախումբը: 16. Ստեփան Արամայիսի ... (ծն.1930), հայ նշանավոր տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր (1966), պրոֆեսոր (1970): 1983-ից ՍՍՀՄ Պետականի նախագահի տեղակալ: 17. Աբրահամ Մոսեելի ... (1881-1963), սովետական ականավոր փիլիսոփա, ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: 18. Լեւ Դավիթովիչ ... (1908-1968), սովետական տաղանդավոր ֆիզիկոս, եղել է աշխարհի մի շարք երկրների ԳԱ պատվավոր անդամ: Արժանացել է Նոբելյան մրցանակի: 19. Գետ Հայաստանում Սեւանի ավազանում: Սկիզբ է առնում Գեղամա լեռնաշղթայի արեւելյան լանջից եւ թափվում Սեւանա լիճ: 20. Սերգեյ Իոսիֆի ... (ծն.1924), հայ հանրաճանաչ կինոռեժիսոր: Նրա ստեղծագործությանը բնորոշ է սերը ժողովրդական արվեստի, ժողովրդի անցյալն ու ներկան սնող մշակութային արժեքների նկատմամբ: 21. Իլյա Եֆիմովիչ ... (1844-1930), ռուս ականավոր նկարիչ: Նրա «Շիկահեր կինը» դիմանկարը պահվում է Հայաստանի պետական պատկերասրահում: 22. ... Անհաթ, V-VI դարերի հայ ճանաչված փիլիսոփա, նետալատոնական ուղղության հետևորդ: Հին հայկական փիլիսոփայության աշխարհիկ ուղղության հիմնադիր: 23. Դու հնչեցիր պառնասում, Երբ Արամազդը հաղթական ...ները քշեց երկնքից Դեպի անդունդ անսահման (Ս.Նալբանդյան): 24. Որեւէ պետության կողմից այլ պետության կամ ժողովրդի տերիտորիալ ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի գործադրում: 25. XV դարի հայ գրիչ: Կաֆայի (այժմ Թեոդոսիա) գրչական դպրոցի աչքի ընկնող ներկայացուցիչ: 26. Մաքուր, անարատ, սուրբ, անբիծ: 27. Օդազնացության եւ տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչություն ԱՄՆ-ում:

Նախորդ համարի խաչբառի պատասխանները

- Ուղղահայաց
 1. Կորալ, 2. Տեխաս, 6. Ալմաստ, 7. Բազալտ, 9. Գրանիտ, 12. Մարմար, 13. Սատուրն, 19. Արյուն, 22. Կշեռք, 23. Ցուլ, 27. Չարոխտ, 28. Սաաֆիր, 33. Չիթակն, 34. Սիսիան, 35. Գոճազն, 41. Պիրոպ, 43. Լուսին:
- Հորիզոնական
 3. Ցիրկոն, 4. Նեֆրիտ, 5. Լուսնաքար, 8. Մարգարիտ, 10. Քար, 11. Բիրմա, 14. Սարդափ, 15. Դահանակ, 16. Ամեթիստ, 17. Ցիմոֆան, 18. Բուրդա, 20. Ագաթ, 21. Արեւ, 22. Կարիճ, 24. Փեյնիթ, 25. Տուֆ, 26. Թաֆեիտ, 29. Ռուբին, 30. Օպալ, 31. Վագր, 32. Քվարց, 36. Հիբոնիտ, 37. Ռոդոնիտ, 38. Բիքսբիտ, 39. Տոպազ, 40. Յաշմա, 42. Սաթ, 44. Ալմանդին, 45. Տուրմալին, 46. Մորիոն, 47. Ցիտրին:

Կազմեց ժողա ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

Հայտարարություն

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) *ՀՀ քաղաքացիությունը.*
 - 2) *ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*
- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**
- 1) *դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի ամուսնով.*
 - 2) *Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.*
 - 3) *հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.*
 - 4) *տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ վերոնշյալ կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.*
 - 5) *ինքնակենսագրություն:*
- Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ. մինչև ապրիլի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 16:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից**, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Չրազդան, Կենտրոն քաղա՝ նաս 96:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. ապրիլի 26-ին՝ ժամը 13:00-ին**, Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (033) 27-32-32, (093) 15-93-81 հեռախոսահամարներով: Էլեկտրոնային հասցեն՝ statecollege@list.ru:

Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Սեւանի բազմագործառուբային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) *ՀՀ քաղաքացիությունը.*
 - 2) *ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*
- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**
- 1) *դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի ամուսնով.*
 - 2) *Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.*
 - 3) *հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.*
 - 4) *տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ վերոնշյալ կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.*
 - 5) *ինքնակենսագրություն:*
 - 6) *Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը (առկայության դեպքում):*
- Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2024 թ. ապրիլի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից**, Սեւանի բազմագործառուբային պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Սեւան, Սահարյան 162:
- Մրցույթը տեղի կունենա **2024 թ. ապրիլի 26-ին՝ ժամը 12:00-ին**, Սեւանի բազմագործառուբային պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 77-56-57 հեռախոսահամարով: Էլեկտրոնային հասցեն՝ liana_simonyan2017@mail.ru:

Հայտարարություն

«Դիլիջանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր տեղի համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) *ՀՀ քաղաքացիությունը.*
 - 2) *ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):*
- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝**
- 1) *դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի ամուսնով.*
 - 2) *Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.*
 - 3) *հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.*
 - 4) *տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ վերոնշյալ կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան.*
 - 5) *ինքնակենսագրություն.*
 - 6) *Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը (առկայության դեպքում):*
- Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
- Փաստաթղթերն ընդունվում են **մինչև 2024 թ. ապրիլի 3-ից մինչև ապրիլի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 17:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից**, Դիլիջանի արվեստի պետական քոլեջում, հասցեն՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Կալինինի փող. 57:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. մայիսի 6-ին՝ ժամը 13:00-ին**, Դիլիջանի արվեստի պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0268) 2-74-86 հեռախոսահամարով: Էլեկտրոնային հասցեն՝ pianoart@list.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Արվանի բազմագործառուբային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի նկարչի՝ միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ «Գեղանկարչություն» և «Դիզայն» մասնագիտություններով ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներ դասավանդողի, «Ինֆորմատիկայի» ուսուցչի թափուր տեղերի համար:

- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.**
- *դիմում (ծե 1),*
 - *1 լուսանկար 3x4 չափի,*
 - *բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),*
 - *ամճը հաստատող փաստաթուղթ,*
 - *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
 - *ինքնակենսագրություն (ծե 5),*
 - *այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
 - *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաե գինվորական գրքույկ,*
 - *իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
 - *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Փաստաթղթերը ընդունվում են **մինչև 2024 թ. ապրիլի 12-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից**, Արվանի բազմագործառուբային պետական քոլեջում, հասցեն՝ ք. Արվան, ուսանողական նրբանցք 4:

Մրցույթը կկայանա **2024 թ. ապրիլի 15-ին՝ ժամը 12:00-ին**, Արվանի բազմագործառուբային պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (060) 75-20-50 հեռախոսահամարով: Էլեկտրոնային հասցեն՝ absecollege@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու և գրականություն» (81 ժամ) դասավանդող դասախոսի թափուր տեղի համար:

Մանկավարժի համապատասխանության նկատմամբ պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջները.

- մանկավարժական համապատասխան որակավորում (բակլավլի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տարը տարվա ընթացքում մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ:
- Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.**
- *դիմում (ծե 1),*
 - *1 լուսանկար 3x4 չափի,*
 - *բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),*
 - *ամճը հաստատող փաստաթուղթ,*
 - *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
 - *ինքնակենսագրություն (ծե 5),*
 - *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
 - *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաե գինվորական գրքույկ,*
 - *իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
 - *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Փաստաթղթերը ընդունվում են **մինչև 2024 թ. ապրիլի 17-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից**, Երեւանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 պետական քոլեջում, հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 2-րդ զանգված, Մուղղված 37Լ:

Մրցույթը կկայանա **2024 թ. ապրիլի 22-ին՝ ժամը 11:00-ին**, Երեւանի Ն. Աճեմյանի անվան թիվ 2 պետական քոլեջում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 67-23-01, (010) 67-24-43 հեռախոսահամարներով: Էլեկտրոնային հասցեն՝ n2college.am:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Նաիրիի արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» (1 դրույթ) մասնագիտության արտադրական ուսուցման վարպետի, «Ինֆորմատիկա» և «Համակարգչային օպերատորության հիմունքներ» (360 դասաժամ), «Քիմիա» (187 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է բանավոր հարցազրույցի միջոցով՝ ըստ ուսումնարանի կողմից կազմված բանավոր առաջադրանքներից, որոնք առնչվում են դասավանդվելիք առարկային (մոդուլին) և մանկավարժական գործունեությանը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *ամճը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Չե 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաե գինվորական գրքույկ,*
- *իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-91-26, (077) 56-39-52 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երեւանի Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (11 դասաժամ), ինֆորմատիկայի (16 դասաժամ), ազգային երգ ու պարի (7 դասաժամ), ֆրանսերենի (27 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *ամճը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Չե 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաե գինվորական գրքույկ,*
- *իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-91-26, (077) 56-39-52 հեռախոսահամարներով:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 19-ին՝ ժամը 13:30-ին**, Երեւանի Ա. Մանուկյանի անվան հ. 93 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Դավթաշեն, 5-րդ փ.:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 36-31-83 հեռախոսահամարով:



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի հ.3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *ամճը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Չե 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաե գինվորական գրքույկ,*
- *իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 4-30-45, (093) 09-47-78 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավի-րի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (5 դասաժամ), ԹԳԳԿ (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում (Չե 1), մեկ լուսանկար 3x4 չափի,*
- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),*
- *ամճը հաստատող փաստաթուղթ,*
- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),*
- *ինքնակենսագրություն (Չե 5),*
- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*
- *ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաե գինվորական գրքույկ,*
- *իրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*
- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:*

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0224) 4-30-45, (093) 09-47-78 հեռախոսահամարներով:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 18-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նոր Կեսարիա, փ. 14, թ. 20:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 51-70-23 հեռախոսահամարով:

